# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
## ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-25/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Աշոցք

7 ապրիլի 2025թ. ժամը 11:00

*Մասնակցում էին՝*

գնահատող հանձնաժողովի նախագահ Աշոտ Հովհաննիսյան
գնահատող հանձնաժողովի անդամ՝ Մերի Հակոբյան
գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Էմմա Ղազարյան

Բացակայում էր՝ Արմինե Հովհաննիսյան

ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-25/18 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման, գնահատման և արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-25/18 ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնվելիք միջոցառումների կազմակերպման ծառայությունների գնման գներն ըստ չափաբաժինների.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման գինը |
|---|---|---|
| 1 | Միջոցառումների կազմակերպման ծառայություններ | 4000000 |

Հանձնաժողովն արձանագրեց, որ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնման առարկայի բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն հաղորդեց հանձնաժողովի անդամներին գրանցամատյանում կատարված գրառումների մասին: Ըստ այդմ հայտնի դարձավ, որ ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Մասնակցի անվանումը | Հասցե | Հեռախոս |
|---|---|---|
| Ստեփան Կոլումբյան Միհրանի Ա/Ձ | ՀՀ ք. Երևան, Նոր Արեշ փ. 7, տ.63 | 055 33-33-11 |

Քարտուղարը գրանցամատյանը և գրանցված հայտը հանձնեց հանձնաժողովի նախագահին:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկը՝ հիմք ընդունելով տառերով գրվածը: Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը հետևյալն էր.

ՀՀ դրամ

| Մասնակից | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|
| Չափաբաժին 1՝ Միջոցառումների կազմակերպման ծառայություններ | | | |
| Ստեփան Կոլումբյան Միհրանի Ա/Ձ | 3950000 | - | 3950000 |

Հանձնաժողովը գնահատեց.

1. հայտ պարունակող ծրարը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը հրավերո սահմանված պահանջներին,

2. բացված ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմմա համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

Գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Ծրարը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին | Ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին |
|---|---|---|
| Ստեփան Կոյումջյան Միհրանի Ա/Ձ | Համապատասխանում է | Համապատասխանում է |

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

*Մասնակցի ներկայացրած հայտը գնահատել բավարար ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-25/18 ծածկագրո գնման ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ:*

Որոշումն ընդունվեց ձայների 2 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 2

*Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ որոշել ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-25/18 ծածկագրով գնման ընթացակարգի՝ ընտրված մասնակից ճանաչել Ստեփան Կոյումջյան Միհրանի Ա/Ձ -ին՝ որպես գնման ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին բավարարող հայտ և գնման գինը չգերազանցող գնային առաջարկ ներկայացրած մասնակից:*

Որոշումն ընդունվեց ձայների 2 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 3

*Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-24/17 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից Ստեփան Կոյումջյան Միհրանի Ա/Ձ-ի հետ կնքել միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պայմանագիր:*

Որոշումն ընդունվեց ձայների 2 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 4

*Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԾՁԲ-25/18 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:*

Որոշումն ընդունվեց ձայների 2 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի անգործության ժամկետ չի սահմանվում և հանձնարարեց քարտուղարին նիստին հաջորդող 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին

ուղարկել ծանուցում՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ ______________ Աշոտ Հովհաննիսյան
Հանձնաժողովի անդամներ ______________ Մերի Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար ______________ Էմմա Ղազարյան